

«Եվրասիական տնտեսական  
միության մասին» պայմանագրի

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### **Անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու մասին**

1. Սույն Արձանագրությունը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի XXVI բաժնի համաձայն եւ կարգավորում է անդամ պետությունների աշխատավորներին ու նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնություն ցուցաբերելու հետ կապված հարցերը:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

«մշտական բնակության պետություն»՝ պետություն, որի քաղաքացին է պացիենտը.

«բժշկական կազմակերպություն (առողջապահական հիմնարկ)»՝ իրավաբանական անձ անկախ կազմակերպարավական ձեւից, որը որպես հիմնական (կանոնադրական) գործունեություն իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա, այլ իրավաբանական անձ անկախ կազմակերպարավական ձեւից, որը հիմնական (կանոնադրական) գործունեության հետ մեկտեղ իրականացնում է բժշկական գործունեություն, կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձ, որն իրականացնում է բժշկական գործունեություն՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

«բժշկական տարահանում»՝ պացիենտի կյանքը փրկելու եւ առողջությունը պահպանելու նպատակով պացիենտի տեղափոխում (այդ թվում՝ այն

պացիենտների, որոնց կյանքին սպառնացող իրավիճակների դեպքում հնարավոր չէ ցուցաբերել անհրաժեշտ բժշկական օգնություն այն բժշկական կազմակերպություններում (առողջապահական հիմնարկներում), որտեղ նրանք գտնվում են, եւ այն պացիենտների, որոնք տուժել են արտակարգ իրավիճակների եւ բնական աղետների հետեւանքով, ինչպես նաեւ տառապում են շրջապատի մարդկանց համար վտանգավոր հիվանդություններով)։

«պացիենտ»՝ անդամ պետության աշխատավոր կամ նրա ընտանիքի անդամ, որին ցուցաբերվում է բժշկական օգնություն, կամ որը դիմել է բժշկական օգնություն ստանալու համար՝ անկախ իր մոտ հիվանդությունների առկայությունից եւ իր վիճակից։

«շտապ բժշկական օգնություն (անհետաձգելի)»՝ բժշկական այնպիսի ծառայությունների համալիր, որոնք տրամադրվում են առանց պացիենտի կյանքին սպառնացող վտանգի ակնհայտ նշանների հանկարծակի սուր հիվանդությունների, վիճակների, քրոնիկ հիվանդությունների սրացումների դեպքում։

«շտապ բժշկական օգնություն (արտակարգ)»՝ բժշկական այնպիսի ծառայությունների համալիր, որոնք տրամադրվում են պացիենտի կյանքի համար սպառնալիք ներկայացնող սուր հիվանդությունների, դժբախտ պատահարների, վնասվածքների, թունավորումների եւ այլ վիճակների դեպքում։

3. Աշխատանքի տեղավորման պետությունն անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ցուցաբերումն ապահովում է այն կարգով եւ պայմաններով, որոնք սահմանվել են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով։

4. Անդամ պետություններն իրենց տարածքում անդամ պետության աշխատավորներին եւ նրանց ընտանիքների անդամներին տրամադրում են անվճար շտապ բժշկական օգնության իրավունք (անհետաձգելի եւ արտակարգ) նույն կարգով եւ նույն պայմաններով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիներին։

Շտապ բժշկական օգնությունը (անհետաձգելի եւ արտակարգ) անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքի անդամներին աշխատանքի տեղավորման պետության առողջապահական պետական ու մունիցիպալ համակարգերի բժշկական կազմակերպությունների (առողջապահական հիմնարկների) կողմից ցուցաբերվում է անվճար՝ անկախ բժշկական ապահովագրության վկայականի առկայությունից:

Բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի)՝ անդամ պետությունների աշխատավորներին եւ նրանց ընտանիքի անդամներին ցուցաբերված շտապ բժշկական օգնության ծախսերի փոխհատուցումն իրականացվում է աշխատանքի տեղավորման պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեների հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան:

5. Պացիենտի կյանքին կամ շրջապատի մարդկանց առողջությանն սպառնացող անմիջական վտանգը վերացնելուց հետո աշխատանքի տեղավորման երկրի բժշկական կազմակերպությունում (առողջապահական հիմնարկում) բուժումը շարունակելու դեպքում տրամադրված ծառայությունների փաստացի արժեքի վճարումն իրականացվում է անմիջականորեն պացիենտի կամ այլ աղբյուրների կողմից, որոնք արգելված չեն աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ՝ սակագներով կամ պայմանավորված գներով:

6. Պացիենտին մշտական բնակության պետություն բժշկական տարահանում իրականացնելու անհրաժեշտության դեպքում առողջության մասին տեղեկությունները բժշկական կազմակերպության (առողջապահական հիմնարկի) կողմից ուղարկվում են մշտական բնակության պետության դեսպանություն եւ (կամ) լիազոր մարմին (կազմակերպություն):

Պացիենտի բժշկական տարահանման հնարավորությունը, ինչպես նաեւ բժշկական տարահանման կարգը սահմանվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Բժշկական տարահանումն իրականացվում է շտապ բժշկական օգնության արտագնա բրիգադներով՝ տեղափոխման ժամանակ

բժշկական օգնություն ցուցաբերելու միջոցառումներ անցկացնելով, այդ թվում՝ բժշկական սարքավորումներ կիրառելով:

Պացիենտի բժշկական տարահանման ծախսերի փոխհատուցումն իրականացվում է մշտական բնակության պետության բյուջետային համակարգի համապատասխան բյուջեի հաշվին՝ առողջապահության ֆինանսավորման գործող համակարգին համապատասխան, կամ այլ աղբյուրների հաշվին, որոնք արգելված չեն մշտական բնակության պետության օրենսդրությամբ:

---